Ալեքսանդր Ծատուրյան

Ա՛խ, երանի չէ . . .

Ա՛խ, երանի չէ՞ մի օր մեր առաջ
Բացվեր ցանկալի մարտի դաշտն ահեղ,
Ուր և՛ հայորդին՝ խղճո՛ւկ, ցավատա՛նջ
Գեթ սրով աներ յուր ցավին մի դեղ,
Ուր կարողանար նա արյան գնով
Ազգին պարգևել հաղթության պսակ,
Կամ թե չէ հաղթված, բայց ազատ հոգով
Շունչ փչեր իբրև ազգի նահատակ:

Ա՛խ, երանի չէ՞ այս ստրկությունից
Զորավոր ձայնը սուրբ ազատության
Գոչեր մեզ մի օր դեպի ոգելից
Քաջ ճակատամարտ կյանքի և մահվան.
Այնտեղ սուր ձեռքին, բոցերի միջին,
Պատրաստ մեր կյանքը ազգին զոհելու,
Մենք ցույց կըտայինք ամբողջ աշխարհին
Թե ո՞վ է կոչված ստրուկ ապրելու...

Այնտեղ միաշունչ, միաբան հոգով
Մենք կհնչեինք երգն արիության,
Եվ հաղթանակի մեծաշուք փառքով
Մենք կըփշրեինք բրոնության շղթան...
Ա՛խ, երանի չէ՞, ո՛վ ազգ իմ թշվառ,

Հասներ այդ օրը, բացվեր քո առջև
Քաջ կռվի դաշտը, այնտեղ քեզ պայծառ
Կրժպտեր անշուշտ նոր կյանքի արև...

1880, 15 հուլիսի